ՄԵՂՐԵՑՈՑ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Նժդեհ Երանեան

Ներածութիւն

Մեղրեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին գտնուում է Շուշի քաղաքի վերին թաղում, Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցուց մօտ 600 մ հարաւ-արեւմուտք: Այն կառուցել են մեղրեցի ներգաղթեալները՝ համանուն թաղամասում՝ 1838 թուականին: Կառուցման արձանագրութեան մէջ յիշատակուած է որպէս սբ. Ամենափրկիչ Մեղրեցոց եկեղեցի, որը կառուցուել է Մահտեսի Հախումեանցի ծախսերով (Բարխուտարեանց 1895, 132): Եկեղեցին 1960-ական թուականներին քանդուել, յարմարեցուել եւ վեր է ածուել ամառային բացօթեայ կինոթատրոնի (նկ. 1): Ականատեսների վկայութեամբ՝ գրեթէ անհնար էր քանդել եկեղեցու ամուր եւ հաստ պատերը: Խորհրդային տարիներին ադրբեջանական իշխանութիւնների՝ հայկական մշակութային ժառանգութեան բռնաւրացման արդիւնքում (Պետրոսեան 2010, 137-148) պայթեցումներով քանդել են պատերի մեծ մասը, իսկ մեկ մետրից բարձր պահպանուած հիմնապատերը ներառուել են ասֆալտի տակ (Մկրտչեան 1980, 159): Դա խորհրդային տարիների ադրբեջանական բռնաւրացման մեխանիզմներից է, ինչը իրականացուել է Արցախի բազմաթիւ քրիստոնէական յուշարձանների հետ (): Պահպանուել է միայն եկեղեցու արեւելեան պատը՝ մեծ ու փոքր աբսիդներով: Այդ տեղեկութիւնները ճշտելու՝ հիմնապատերը բացելու եւ եկեղեցու նախնական տեսքը վաւերացնելու նպատակով 2017 թ. տեղում իրականացուեցին պեղման աշխատանքներ (արշաւախմբի ղեկավար պ.գ.թ. Ն. Երանեան, ճարտարապետ՝ Մ. Տիտանեան, 6 պեղող-բանուոր): Ի Պեղումներից առաջ եկեղեցու տարածքն ամբողջութեամբ ասֆալտապատ էր: Տեղում երեւում էին միայն խորանը եւ երկու աւանդատները (նկ. 2):

Ճարտարապետութիւնը

Ըստ Մակար Բարխուդարեանցի՝ այն կառուցուած է եղել գրեթէ նոյն սկզբունքներով, ինչ Շուշիում կառուցուած Ագուլեցոց եկեղեցի. աղօթասրահն ունեցել է ուղղանկիւն ծաւալատարածական յօրինուածք: Թաղակապ կամարները յանգել են սրահի կենտրոնում բարձրացուած չորս սիւների եւ երկայնական պատերի երեք զոյգ որմնասիւների վրայ: Ունեցել է երկու մուտք հարաւային եւ արեւմտեան կողմերից եւ 10 լուսամուտ: Զանգակատունը եղել է եռայարկ՝ կառուցուած սրբատաշ քարից: Ութանկիւն ռոտոնդայի նման մի փոքրիկ զանգակատուն էլ եղել է եկեղեցու տանիքի մէջտեղում, ինչը բնորոշ է Արցախի համաժամանակեայ բազմաթիւ եկեղեցիների համար:

Համաձայն Մակար Բարխուդարեանցի՝ հարաւային դռան ճակատային քարի վրայ եղել է հետեւեալ արձանագրութիւնը. «1838 Մահտեսի Պապայ Հախումեանց տոհմին չունէր զաւակ մարմնաւոր ինքեան նախ քան զօրհասին պատրաստեաց կտակ չինել զտաճար սուրբ եկեղեցւոյ մի երկնահանգոյն, որ տայ վերճեմել մարդկային սեռից ի բարին անհուն յանուն Տիրամայր սուրբ Աստուածածին կենաց պատճառի յիշատակ հոգւոյն ընդ անցաւորին յայսմ աշխարհի նախ քան կատարել նոր նպատակի հողացաւ մարմին, որ աստ կայ եղեալ ի մէջ տաճարիս պերճ գերեզմանիս» (Բարխուտարեանց 1895, 132-133):

Ներկայումս անյայտ է, թէ որտեղ է գտնուում բարաւորի նշուած բեկորը:

Համաձայն «մեղրեցոց եկեղեցու վերանորոգման վերաբերեալ Ղարաբաղի հոգեւոր ատեանի 1839թ. մայիսի 13-ի եզրակացութեան (ՀՀ ՊԿՊԱՅ, ֆ. 56, ց. 1, գ. 415, թ. 2-3, ձեռագիր, բնագիր)է՝ սկզբում տեղում եղել է փայտաշէն եկեղեցի: Փաստաթղթից պարզ է դառնում, որ 1839 թ. յետոյ նոր պիտի կառուցուէր եկեղեցին: Հաւանական է, որ ճակատային քարի արձանագրութեան մէջ ներկայացուած է եկեղեցու նախնական՝ փայտաշէն կառոյցի թուականը:

Պեղումները

Արդէն նշուեց, որ եկեղեցու տարածքը 1960-ական թուականներից յետոյ ներառուել էր պարսպապատի մէջ եւ տարածքը խորհրդային տարիներին օգտագործւում էր որպէս բացօթեայ կինոթատրոն: Պեղումների համար պարսպապատից մօտ 2 մ հեռաւորութեամբ ամբողջ մակերեսով ասֆալտը հեռացուեց եւ պեղման աշխատանքներն սկսուեցին բակի հարաւարեւելեան անկիւնից՝ «բեմի» տակից (նկ. 3): Հողի շերտը 25 սմ հեռացնելուց յետոյ բացուեցին եկեղեցու հարաւային պատի վերին շարի քարերը: Արդիւնքում բացուել են արտաքին պատերի մինչեւ 0,8 մ բարձրութեամբ մնացորդները, որոնք իրականացուած են եղել կոպտատաշ քարերով: Պատերի հաստութիւնը 1,3 մ է:

Հարաւային եւ արեւմտեան պատերի վրայ պահպանուել են դռների բացուածքների հետքերը: Հարաւային պատի դռան պահպանուած անկիւնաքարերը սրբատաշ են (նկ. 4): Ենթադրւում է, որ սրբատաշ են եղել նաեւ կառոյցի անկիւնաքարերը եւ պատուհանների շրջանակները՝ ինչը շատ բնորոշ է Արցախի 18-19-րդ դարերի նմանատիպ կառոյցների համար: Ինչպէս հարաւային, այնպէս եւ արեւմտեան դռների բացուածքը 1,6 մ է: Արեւմտեան դռան բացուածքի անկիւնաքարերը բացակայում են. տեղում վերջին շարն իրականացուել է աղիւսներով (նկ. 5): Չի բացառւում, որ սա յետագայ միջամտութեան արդիւնք է:

Պեղումներով բացուել են նաեւ արեւմտեան պատին կից երկու որմնասիւները, որոնց վրայ յենուել են երկայնական կամարները: Վերջիններս նոյնպէս իրականացուած են եղել կոպտատաշ կրաքարով: Երկայնական պատերին կից մնացած որմնասիւները չեն պահպանուել: Սակայն պահպանուել է հիւսիս-արեւմտեան մոյթի հիմնատակը, ինչը յուշում է թէ՛ (երկայնական որմնասիւների տեղը, թէ՛ (ութանիստ զանգակատան յատակագծային չափերը:

Այժմ կանգուն արեւելեան պատի՝ նրան կից խորանի եւ երկու աւանդատների վերակառուցման ժամանակ խորանում բարձրացուել են աղիւսէ պատեր, փոփոխութեան են ենթարկուել բեմի չափերը եւ ձեւը, խորանի ճակատային մասը երեսապատուել է փայտէ տախտակներով: Բեմի տակ՝ հիւսիսային հատուածում, կտրուածքում երեւում է ազբեստից խողովակ, ինչը վկայում է, որ բեմը եւս փոփոխութեան է ենթարկուել (նկ. 6):

Հարաւային պատին կից ողջ երկայնքով, ինչպէս նաեւ արեւմտեան պատի՝ հարաւային պատի անկիւնից մինչեւ մուտքն ընկած հատուածը բակի կողմից սալայատակուած է, ինչը աստիճանաձեւ բարձրանում է մօտ 30 սմ-ով:

Եկեղեցին ներսից սուաղուած է եղել. պահպանուել են սուաղի հետքերը հարաւային եւ արեւմտեան պատերի վրայ (նկ. 7):

Եզրակացութիւններ

Այսպիսով տեսնում ենք, որ կարճատեւ պեղման աշխատանքները գալիս են լրացնելու եւ հաստատելու Մեղրեցոց Սբ.

Աստուածածին եկեղեցու մասին եղած տեղեկութիւնները:

*Պեղումների արդիւնքում վաւերացուել է 24,75*12,77 մետր չափսերի կառոյցը, որի պատերի հաստութիւնը հասնում է մինչեւ 1,6 մետրի:*

Եկեղեցին ունեցել է երկու՝ հարաւային եւ արեւմտեան մուտք, որոնք արտաքին կողմից սալայատակուած են եղել:

Դատելով որմնասիւների եւ հիւսիսարեւմտեան մոյթի հիմնատակի առկայութիւնից կարելի է ենթադրել, որ հաւաստի են Մ. Բարխուդարեանցի տեղեկութիւններն այն մասին, որ ուղղանկիւն ծաւալատարածական յատակագծումով եկեղեցու թաղակապ կամարները յանգել են սրահի կենտրոնում բարձրացուած չորս սիւների եւ երեք զոյգ որմնասիւների վրայ:

Մեղրեցոց եկեղեցին իր ծաւալատարածական եւ ճարտարապետական լուծումներով կրկնում է 17-19-րդ դարերի Շուշիում եւ Արցախի այլ շրջաններում յայտնի եկեղեցիների տիպը:

Գրականութեան ցանկ

Բարխուտարեանց 1895 – Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, Արօր:

Մկրտչեան 1985 - Մկրտչեան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները, Երեւան, Հայաստան, 1985:

Պետրոսեան 2010 - Պետրոսեան Հ., Մշակութային էթնոցիդն Արցախում (մշակութային ժառանգութեան բռնաի իւրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչութիւնը եւ էթնիկական զտումների քաղաքականութիւնը Լեռնային Ղարաբաղի դէմ, Շուշի, 2010, էջ 137-148:

Գծագրեր եւ լուսանկարներ

Նկ. 1 - Եկեղեցու ընդհանուր տեսքը պեղումներից առաջ

Նկ. 2 - Եկեղեցու խորանը եւ երկու աւանդատները

Նկ. 3 - Եկեղեցու տարածքի ասֆալտի շերտի հեռացման աշխատանքները

Նկ. 4 - Հարաւային մուտքի սրբատաշ եզրերը եւ սալայատակուած բակը

Նկ. 5 - Արեւմտեան դռան բացուածքի աղիւսէ շարը

Նկ. 6 - Բեմի տակով անցնող խողովակը

Նկ. 7 - Սուաղի հետքեր եկեղեցու պատերի վրայ

Նկ. 8 - Եկեղեցու ընդհանուր տեսքը պեղումներից յետոյ



Նկ. 9 - Եկեղեցու յատակագիծը